ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2024 թվականի N 1928-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 176-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի «Ոստիկանության բժշկական հանձնաժողովի ձևավորման ու գործունեության կարգը և պայմանները, ինչպես նաև դրա լիազորությունները սահմանելու մասին» N 176-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «ներքին գործերի նախարարության» բառերը.

2) որոշմամբ սահմանված հավելվածի՝

ա. վերնագրում «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ» բառից առաջ լրացնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» բառերը,

բ. 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «ներքին գործերի նախարարության» բառերը,

գ. 3-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հանձնաժողովի անդամները համալրվում են հետևյալ բժիշկ մասնագետներով՝ թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, քիթ-կոկորդ-ականջաբան, մաշկաբան, ստոմատոլոգ, ուլտրաձայնային ախտորոշման բժիշկ, սրտաբան և այլ մասնագետով՝ հոգեբան:»,

դ. 7-րդ կետում «ոստիկանության կադրային քաղաքականության վարչության պետի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման, ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունների պետերի» բառերով, իսկ «և ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության» բառերը փոխարինել «կամ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության» բառերով,

ե. 8-րդ կետի 2-րդ ենթակետում «քննություն.» բառը փոխարինել «քննություն, արյան MRP հետազոտություն, արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշում և ներակնային ճնշման չափում (35 տարեկանից բարձր փորձաքննվողների համար).» բառերով,

զ. 12-րդ կետի 2-րդ նախադասության «կամ խեղման» բառերից հետո լրացնել «կամ մահվան» բառերը,

է. լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-ին կետ՝

«24.1. Բժշկական փորձաքննության իրականացման ժամկետի, դրա երկարաձգման, կասեցման, կարճման և վերսկսման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:»,

ը. 32-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ